




ՀԱՇՎԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԸ = ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԻՆ

12.05.2014

**Բանկերի հաճախորդների հաշիվները**



Վերջին 7 տարիների ընթացքում Հայաստանում գործող առևտրային բանկերի հաճախորդների քանակը ավելի քան 763 հազարից (2006թ-ի վերջի դրությամբ) աճել է, հասնելով գրեթե 1,9 մլն՝ 2013թ-ի արդյունքներով: (Հիշեցում. Եթե մեկ հաճախորդը հաշիվներ ունի մեկից ավելի բանկերում, ապա նույնքան անգամ ներառվում է հաճախորդների թվի մեջ): Միայն անցյալ տարվա ընթացքում բանկերի հաճախորդների թիվն ավելացել է 285,5 հազարով (կամ 17,6%), այդ թվում ֆիզիկական անձանց՝ 281,8 հազարով (կամ 18,2%), իրավաբանական անձանց՝ 3,7 հազարով (կամ 5,1%):

Միաժամանակ նկատենք, որ Հայաստանում աշխատունակ տարիքի (16 տարեկանից բարձր՝ մինչև կենսաթոշակային տարիք) բնակչության թվաքանակը 01.01.2012թ-ի դրությամբ կազմում էր 2 մլն 274 հազար: 2013թ-ին աշխատունակ տարիքում գտնվող բնակչության թիվը Հայաստանում կազմում էր 67,8%, դրանից փոքր՝ 20,1%, մեծ՝ 12,1%:


Վերջին 7 տարիների ընթացքում բանկերի հաճախորդների հաշիվների քանակը գրեթե 882 հազարից (2006թ-ի վերջի դրությամբ) աճել է 2013թ-ի արդյունքներով՝ անցնելով 3,2 մլն: Միայն անցյալ տարվա ընթացքում հաճախորդների հաշիվների քանակը ավելացել է 524,2 հազարով (կամ 19,6%), այդ թվում ֆիզիկական անձանց՝ ավելի քան 514,7 հազարով (կամ 20,4%), իրավաբանական անձանց՝ 9,5 հազարով (կամ 6%): Նույն ժամանակահատվածում ընթացիկ հաշիվներն ավելացել են 19,6%, վարկայինները՝ 20,3%, և ժամկետային հաշիվները՝ 16%:



### CASH-Ը ՆԱՀԱՆՁՈՒՄ Է

13.05.2014

#### Վճարային քարտերի քանակը



ՌԴ կառավարությունը ս.թ. ապրիլի 18-ին հավանություն է տվել ազգային վճարային համակարգի (ԱՎՀ) մասին օրինագծին, ինչը կարելի է համարել Արևմուտքի պատժամիջոցներին Ռուսաստանի շտապ պատասխան հակահարված: Հիշեցնենք, որ ԱՎՀ-ի ստեղծման մասին հարցը բարձրացվել էր անմիջապես այն բանից հետո, երբ ԱՄՆ-ի պատժամիջոցների տակ հայտնվեց «Ռոսիյա» բանկը, իսկ Visa International և MasterCard միջազգային վճարային

համակարգերը առանց ծանուցման դադարեցրեցին իրենց կողմից թողարկված քարտերով գործարքների անցկացումը:

Իսկ Հայաստանում ԱՎՀ-ն ստեղծվել էր դեռ 14 տարի առաջ, իսկ ավելի ճշգրիտ՝ 2000թ-ի մարտին: Այդ կարևոր կառույցի հիմնադիրներն էին 10 առևտրային բանկերը ԿԲ-ի հետ միասին՝ USAID-ի անմիջական օժանդակությամբ:

ՀՀ ԿԲ-ի տվյալներով, Հայաստանի տարածքում գործող բանկերը անցյալ տարվա արդյունքներով տրամադրում (սպասարկում) էին 7 տեսակի վճարային քարտեր, սկսած բանկերի ներգրավվածության առումով գերակշռող ArCa (Armenian Card) ԱՎՀ-ից, որին մասնակցում են 21 բանկերից 19-ը, մինչև MasterCard (16 բանկեր), Visa (14) և էքսկլյուզիվ (թողարկվում և սպասարկվում են միայն մեկ բանկի կողմից) AmEx (American Express՝ «ԱԿԲԱ-Կրեդիտ Ազրիկոլ բանկ») և վերջերս «Արարատբանկի» կողմից ներկայացված Diners Club քարտերից:

- Ժամանակը միննույնն է իրենք վերցնում է, - ասում է ՀԲՄ-ի նախագահ Սամվել Ջզմաչյանը, - և մեր քաղաքացիները, որոնք ավանդաբար գերադասում են «քեշ»-ը, այսինքն՝ ռեալ փողը ձեռքերում և գրպաններում, հետզհետե հրաժարվում են այդ կարծրատիպից, ավելի ու ավելի հաճախակի օգտվելով հարմար և անվտանգ պլաստիկ քարտերից: Միտքս ապացուցելու համար բերեմ մի քանի խոսուն թվեր: Այսպես, վճարային քարտերի քանակը Հայաստանում վերջին 7 տարիների ընթացքում 209 հազարից ավելացել է, հատելով 1,5 մլն-ի սահմանագիծը: Ընդ որում, այդ առումով 2013թ-ի վերջի դրությամբ գերակշռում էին Visa քարտերը (մոտ 652,4 հազար), որոնցից անմիջապես հետո ընթանում է մեր ArCa-ն (564,5 հազար): Միայն մեկ, անցյալ տարվա ընթացքում պլաստիկ քարտերի քանակը Հայաստանում ավելացել է 18,5%, և աճի ամենամեծ դինամիկան ցուցադրել են Visa-ն (25,2%) և ArCa-ն (17,7%):

Դրան ավելացնենք, որ բոլոր տեսակի քարտերով գործարքների ընդհանուր քանակը 3 մլն-ից (2006թ-ի վերջի դրությամբ) հասել է 20,5 մլն-ի (2013թ-ի արդյունքներով): Այդ ցուցանիշով նորից գերակշռում են Visa-ն (մոտ 9 մլն) և ArCa-ն (6,6 մլն-ից ավել): Ընդ որում, եթե Visa քարտերով գործարքների քանակը անցյալ տարվա ընթացքում ավելացել է 22,7%, ապա ArCa քարտերով, ընդհակառակը, պակասել է 5,9%: Ինչ վերաբերվում է այդ գործարքների ծավալին, ապա Visa քարտերով այն ավելացել է 120 մլրդ դրամով (կամ 26,6%), իսկ ArCa քարտերով պակասել է 9,2 մլրդ դրամով (կամ 3,2%): Գործարքների ընդհանուր ծավալը գերազանցել է 1,1 տրլն դրամը:

Հայտնենք նաև, որ ըստ քարտերի սպասարկման միջոցների գործարքների առավելագույն քանակը և ծավալը ընկնում է ATM-ներին (բանկոմատներին), որոնցից հետո գնում են POS տերմինալները և այնուհետև ինտերնետ միջավայրը (e-commerce ծառայությունները): Իմիջիայլոց, 2013թ-ին ATM-ների քանակը Հայաստանում ավելացել է 132-ով և հասել 1255-ի, իսկ POS տերմինալների՝ 160-ով, կազմելով 6834: Նախանցյալ տարվա համեմատությամբ 2013թ-ին միայն բանկոմատներով գործարքների քանակն ավելացել է ավելի քան 1 մլն-ով, հասնելով գրեթե 17 մլն:




## ՄԵՐԸ՝ ԹՂԹԱՂԻՐԱՄՆԵՐՈՎ

14.05.2014

### ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզ. անձանց փոխանցումներն ըստ երկրների (զուտ ներհոսք)

#### Զուտ ներհոսք

(մլն դրամ)	ՈՒՆ	ԱՄՆ	Ուկր.	Ղազախ.	Գերմ.	Նրանու.	Իսպ.	ԱՄԷ	Թուրք.	Չին.	Այլ	Հնդասեր
2008	1248.3	28.8	21.3	18.5	7.0	3.7	8.5	2.1	(5.3)	(7.1)	67.2	1393.1
2009	759.9	1.7	7.9	20.4	0.2	(2.0)	0.8	(58.5)	(36.6)	(61.0)	190.5	823.3
2010	942.1	16.0	(0.5)	16.8	(2.7)	(1.7)	(2.5)	(29.3)	(37.9)	(77.9)	73.2	895.5
2011	1178.5	(6.9)	1.6	21.1	(2.0)	(5.9)	(0.3)	(38.8)	(29.9)	(79.7)	98.8	1136.5
2012	1393.7	12.3	(0.3)	24.7	(6.3)	(5.4)	(3.7)	(30.6)	(27.4)	(75.7)	93.4	1374.8
2013-2	1492.7	18.4	(3.4)	24.2	(1.9)	(2.7)	(7.6)	(16.2)	(25.8)	(80.3)	73.1	1450.5
<b>Հնդասեր</b>	<b>7 015.2</b>	<b>70.3</b>	<b>26.6</b>	<b>125.7</b>	<b>(25.7)</b>	<b>(14)</b>	<b>(4.8)</b>	<b>(171.3)</b>	<b>(162.9)</b>	<b>(381.7)</b>	<b>596.2</b>	<b>7 073.6</b>



Նախորդ տարվա համեմատ ֆիզ. անձանց փոխանցումների (զուտ ներհոսքի) ծավալն աճել է

- 75.8 մլն դրամով կամ 5.5%-ով
- Միայն Ռուսաստանից փոխանցումների զուտ ներհոսքի ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 99 մլն դրամով կամ 7,1%-ով

Աղբյուրը՝ ՀՀ ՎԲ

Արտասահմանից հայ «գաստարբայտների» դրամային փոխանցումները չափազանց մեծ նշանակություն ունեն արտաքին առևտրային հաշվեկշռի հսկայական բացասական սաղոն փակելու համար, ինչպես նաև

սպառողական պահանջարկի խրախուսման և ընդհանրապես երկրի տնտեսությունը «պահելու» գործում: Ահա թե ինչու ՌԴ-ի տնտեսության դանդաղեցումը և Ուկրաինայի հետ կոնֆլիկտի հետևանքով նրա դեմ կիրառվող պատժամիջոցները գտնվում են ՀՀ իշխանությունների և առանձին քաղաքացիների ուշադրության կիզակետում, քանի որ Ռուսաստանի տնտեսության վատթարացումն անխուսափելիորեն կանդրադառնա այնտեղ գտնվող Հայաստանի աշխատուժի եկամուտների և համապատասխանաբար ՌԴ-ից ստացումների ծավալի վրա: Մանավանդ որ հենց ՌԴ-ից է Հայաստան գալիս մասնավոր փոխանցումների առյուծի բաժինը:

Իմիջիայոց, ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները 2008թ-ի ավելի քան \$1,6 մլրդ-ից և որոշ անկումից ճգնաժամային 2009-ին ու հաջորդ տարի վերականգնումից հետո տարեց տարի միայն ավելանում են, 2012թ-ին վստահ հատելով \$2 մլրդ-ի շեմը, իսկ անցյալ տարվա արդյունքներով հասնելով գրեթե \$2,3 մլրդ-ի, որից \$1,7 մլրդ-ից ավել բաժին է ընկնում Ռուսաստանին: Նախորդ տարվա համեմատությամբ ընդհանուր աճը կազմել է 2,6%, իսկ միայն Ռուսաստանից՝ 5%:

Համեմատության համար. այս ցուցանիշով ՌԴ-ից հետո ընթացող ԱՄՆ-ից անցյալ տարի ֆիզանձանց փոխանցումները կազմել են «ընդամենը» \$152 մլն: Էլ չենք խոսում այնպիսի երկրներից, ինչպիսիք են Ուկրաինան (\$18 մլն) կամ Ղազախստանը (\$26 մլն):

Ինչ վերաբերվում է հակառակ ուղղությամբ փոխանցումներին, այսինքն՝ Հայաստանից արտասահման, ապա դրանք, ընդհակառակը, ցույց են տալիս անկման միտումներ: Այսպես, 2013թ-ի արդյունքներով արտասահման ուղղված տրանսֆերտների ընդհանուր ծավալը նվազել է 1,7%, կազմելով այնուհանդերձ բավական պատկառելի գումար՝ \$847 մլն, իսկ միայն Ռուսաստան՝ 6,3%, կազմելով \$235 մլն: Այսպիսով, 2013թ-ին Հայաստան մասնավոր փոխանցումների գուտ (նետոտ) ներհոսքն ավելացել է 5,5%, իսկ միայն ՌԴ-ից՝ 7,1%:

Այս տարվա սկիզբը նույնպես դեռևս խնդիրներ չի խոստանում Հայաստանի համար: 2014թ. հունվարին, որը, այսպես ասած, ամենաառատաձեռն ամիսը չէ աշխատանքային միգրանտների համար, ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզանձանց անունով ոչ առևտրային նպատակներով ստացվել է ավելի քան \$99,6 մլն, ինչն այդուհանդերձ 19,6%-ով ավելի է անցյալ տարվա համապատասխան ցուցանիշից: Ինչպես միշտ, կատարված փոխանցումների գերակշռող մասը բաժին է ընկել Ռուսաստանին՝ տրանսֆերտների գումարային ծավալի մոտ 81%: Ս.թ. փետրվարին դրական դինամիկական

պահպանվել է, սակայն անցյալ տարվա նույն ամսվա համեմատությամբ աճն արդեն այդքան տպավորիչ չէ՝ ընդամենը 2%:

Ի՞նչ ցույց կտան հետագա ամիսները:



#### ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ.

Հայաստանի բանկերի միությունը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի միություն է: Միությունն իրավաբանական անձ է, որը հանդիսանում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացած շահույթը մասնակիցների միջև չբաշխող ոչ առևտրային կազմակերպություն:

Միության հիմնական խնդիրներն են՝

- պաշտպանել և ներկայացնել Միության անդամների շահերը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, հասարակական և միջազգային կազմակերպություններում,
- նպաստել միջբանկային կապերի զարգացմանը և ամրապնդմանը, համակարգել Միության անդամների գործունեությունը՝ համատեղ երկարաժամկետ ծրագրերի մշակման և իրականացման համար,
- մասնակցել Հայաստանի Հանրապետությունում բանկային և ֆինանսավարկային գործունեության մասին օրենսդրական և այլ նորմատիվային ակտերի նախագծերի մշակմանը և դրանց հասարակական փորձաքննությանը,
- մշակել և իրականացնել ծրագրեր՝ բանկային կադրերի վերապատրաստման և որակավորման բարձրացման, ինչպես նաև որակավորման ու մասնագիտական համապատասխանության ստուգման ուղղությամբ,
- կազմակերպել սեմինարներ, կոնֆերանսներ և գիտաժողովներ,
- իրականացնել Միության անդամների ընդհանուր շահերից բխող այլ խնդիրներ:

Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ +374 10 52 77 31, Էլ. փոստ՝ [uba@uba.am](mailto:uba@uba.am):